

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆԻ» «ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՏՈՒԿ
ՎՏԱՆԳԱՎՈՐ ՎԱՐԱԿՆԵՐԻ, ԿԵՆԴԱՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ**

Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի հատուկ վտանգավոր վարակների և կենդանի կուլտուրաների փորձարարական լաբորատորիայի (ՀՎՎ և ԿԿՓԼ) հիմնական առաքելությունն է՝ ապահովել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կյանքի և առողջության պաշտպանությունը վարակիչ, այդ թվում՝ հատուկ վտանգավոր հիվանդություններից, Վարակիչ հիվանդությունների և ախտածինների ռեֆերենս հետազոտությունները, ախտածինների շտամների ազգային հավաքածուների պահպանումը, ինչպես նաև գիտավերլուծական, գիտահետազոտական և փորձագիտական-ախտորոշիչ գործունեության իրականացումը:

ՀՎՎ և ԿԿՓԼ-ի ռազմավարական նպատակն է՝ դառնալ միջազգային համագործակցության կենտրոն, իրականացնել համատեղ հետազոտական նախագծերի և կադրերի պատրաստում ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև տարածաշրջանի երկրների համար:

Գիտակցելով սույն առաքելությունը և հաշվի առնելով ռիսկերի արդյունավետ կառավարման կենսական կարևորությունը դրա իրականացման և ռազմավարական նպատակներին հասնելու համար՝ Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի (ներառյալ՝ ՀՎՎ և ԿԿՓԼ) ղեկավարությունը (այսուհետ՝ Ղեկավարություն) ընդունել է ռիսկերի կառավարման սույն քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) և պարտավորվում է առաջնորդվել վերջինում շարադրված սկզբունքներով:

Քաղաքականության նպատակը

Սույն Քաղաքականության նպատակն է ապահովել ռիսկերի կառավարման ծրագրի արդյունավետ գործունեությունը: Այս նպատակի իրականացումը հատուկ նշանակություն ունի բաց հասարակության և տեղեկատվության ինտենսիվ փոխանակման համար:

Ռիսկերի կառավարման ծրագիր

Նպատակին հասնելու համար Ղեկավարությունը որոշում է ընդունել մշակել և ՀՎՎ և ԿԿՓԼ- ում ներդնել ռիսկերի կառավարման ծրագիր՝ համաձայն ISO 31000

միջազգային ստանդարտում նշված սկզբունքների: Ռիսկերի կառավարման ծրագիրը լիովին հաշվի է առնում ազգային և կիրառվող միջազգային օրենսդրության պահանջները:

ՀՎՎ և ԿԿՓԼ- ում մշակվող և ներդրվող ռիսկերի կառավարման ծրագիրը պետք է լինի.

Ինտեգրված. Ռիսկերի կառավարումը կազմակերպության գործունեության անքակտելի մաս է հանդիսանում.

Կառուցվածքային և համապարփակ. Ռիսկերի կառավարման կառուցվածքային և համալիր մոտեցումը բերում է համաձայնեցվող և համադրելի արդյունքների.

Հարմարվողական. Ռիսկերի կառավարման կառուցվածքը և գործընթացը հարաբերվում և հարմարեցվում են՝ հաշվի առնելով կազմակերպության արտաքին և ներքին համատեքստը.

Ներառական. Շահագրգիռ կողմերի համապատասխան և ժամանակին ներգրավումը թույլ է տալիս հաշվի առնել նրանց գիտելիքները, տեսակետներն ու կարծիքները.

Շարժնթաց. Ռիսկերի կառավարումը համարժեքորեն և ժամանակին կանխատեսում, հայտնաբերում, ճանաչում փոփոխությունները և արձագանքում դրանց.

Հիմնված հասանելի լավագույն տեղեկատվության վրա. Ռիսկերը կառավարման համար օգտագործվող տեղեկատվությունը պետք է լինի արդիական, հասկանալի և հասանելի շահագրգիռ կողմերին, առկա տվյալների և ակնկալիքների հետ կապված ցանկացած սահմանափակում և անորոշություն պետք է հաշվի առնվի.

Մարդկային և մշակութային գործոնները հաշվի առնող. Մարդկային վարքագիծը և մշակույթը էապես ազդում են ռիսկերի կառավարման բոլոր տեսակետների վրա՝ յուրաքանչյուր մակարդակում և փուլում.

Շարունակականորեն բարելավվող. Ռիսկերի կառավարման համակարգը շարունակականորեն բարելավվում է՝ շնորհիվ ուսուցման և փորձի կուտակման:

Ծրագրի շրջանակը և սահմանները

Ռիսկերի կառավարման ծրագիրը և սույն քաղաքականությունը տարածվում են ռիսկերի բոլոր տեսակների վրա՝ կապված ՀՎՎ և ԿԿՓԼ-ի հիմնական աշխատանքային գործընթացների հետ, մասնավորապես՝ գիտական, հիմնարար, կիրառական, ռեֆերենս, ախտորոշիչ հետազոտությունների իրականացում, համաձայն Միջազգային դասակարգման ախտաճնության 3-4-րդ խմբերի (1-2 խմբերի՝ ըստ ԱՊՀ դասակարգման) հարուցիչների հաշվառում և պահում:

Սույն քաղաքականության և Ռիսկերի կառավարման ծրագրի կիրառման սահմանները՝ Առողջապահության նախարարության «Հիվանդությունների

վերհսկման և կանխարգելման ազգային կենտրոնի» «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի շենքը՝ տեղակայված Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավիթ Մալյան 37 հասցեում, հատուկ վտանգավոր վարակների և կենդանի կուլտուրաների փորձարարական լաբորատորիայի տարածք:

Ռիսկերի կառավարման նպատակները

Ռիսկերի կառավարման ծրագրի ռազմավարական նպատակներն են՝

1. Ռիսկերի բացահայտման, վերլուծության, գնահատման, ռիսկերի վրա ազդեցության, ռիսկերի մոնիթորինգի և հաշվետվողականության հետևողական և համակարգային մոտեցման ապահովում.
2. Ղեկավարությունը լավագույն հասանելի տեղեկատվության տրամադրում, որի հիման վրա կարելի է կայացվեն որոշումներ.
3. Կայացված որոշումների համապատասխանեցման ապահովում կազմակերպության ուղղվածությանը և նպատակներին, ինչպես նաև դրանց իրականացումը ռիսկի հաստատված հասանելի մակարդակների շրջանակում.
4. Ներքին աուդիտի միջոցով ներքին հսկողության միջոցների արդյունավետ աշխատանքի երաշխավորման ապահովում:

Ռիսկերի հասանելիության մակարդակներ

Ղեկավարությունը սահմանում է թույլատրելի ռիսկի մակարդակը՝ ըստ ռիսկերի առանձին տեսակների.

- Որակի ռիսկերի համար՝ որակի թույլատրելի ռիսկերի վերահսկելի մակարդակ, որը բացառում է որակի ապահովման հիմնական գործընթացների խաթարումը, կամ մարդկանց կյանքի կամ առողջության կորուստը:
- Տեղեկատվական անվտանգության ռիսկերի համար՝ մնացորդային ռիսկի վերահսկելի մակարդակ, որը բացառում է գաղտնի տեղեկատվության տարածումը, կազմակերպության հիմնական բիզնես դադարեցումը կամ մարդկանց կյանքի կամ առողջության կորուստը: Կենսաբանական ռիսկերի համար՝ հասանելի ռիսկի մակարդակը սահմանվում է որպես մնացորդային ռիսկի այն մակարդակը, որը վերահսկելի է և բացառում է աշխատակիցների շփումը, անախտանշան կրությունը, հիվանդանալը կամ վախճանը, ինչպես նաև բացառում է կենսաբանական ազդակների ցանկացած արտանետում շրջակա միջավայր:

Ղեկավարությունը լիովին գիտակցում է, որ պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման համար և պարտավոր է ապահովել բոլոր անհրաժեշտ ռեսուրսներն ու մեխանիզմները ռիսկերի կառավարման ծրագրի արդյունավետ ներդրման և աջակցման համար: Ղեկավարությունը պարտավորվում է կիրառել

անհրաժեշտ միջոցներ՝ աշխատակիցների շրջանում ռիսկերի կառավարման մշակույթը խթանելու և ռիսկերի կառավարման ծրագրի շարունակական քարելավումն ապահովելու համար:

Ռիսկերի կառավարման ոլորտի քաղաքականությանը ՀՎՎ և ԿԿՓԼ-ի բոլոր աշխատակիցները և այլ շահագրգիռ կողմերը պետք է իրազեկվեն: Բոլոր աշխատակիցները, այցելուները, օժանդակ ծառայությունները և շահագրգիռ այլ կողմերը պետք է առաջնորդվեն սույն Քաղաքականությամբ:

Առողջապահության նախարարության

«Հիվանդությունների վերահսկման

և կանխարգելման ազգային կենտրոնի»

«Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի

Տնօրեն՝  Սերգեյ Կարապետյան

«_16_» ____09__2021թ.